# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
# ՔՆՆՈՂ ԱՆՁ

---

ք. Երևան 29.04.2020թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2020/87**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.04.2020թ. թիվ 26/26-1/5856-2020 գրությամբ «Առսարքտեխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 16.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1242-2020 գրության հիման վրա, 21.04.2020թ. թիվ 26/26-1/5856-2020 գրությամբ նախաձեռնել է «Առսարքտեխ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. «Առսարքտեխ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Առսարքտեխ» ՍՊԸ-ն 23.04.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության հետ կապված՝ արդեն մեկ ամսից ավել է Ընկերությունն աշխատում է հեռահար եղանակով՝ տանից, ինչի արդյունքում աշխատակիցների շփման ընթացքում տեղի է ունեցել թյուրըմբռնում, և ոչ դիտավորյալ կերպով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախատեսված ապրանքի տասը միավորի փոխարեն գնային առաջարկում նշվել է ընդամենը մեկ միավորի գին:

Ընկերությունը հայտնել է, որ նշվածի վկայությունն է նաև շուկայական գների ուսումնասիրությունը և Պատվիրատուի կողմից տվյալ գնման համար նախատեսված գումարը:

Ընկերությունը հայտնել է, որ ընդունում է մեղքի իր բաժինը և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է մեղմ գտնվել և մեկ տեխնիկական վրիպակի պատճառով աշխատող, պետությանը հարկ վճարող, բարի համբավ ունեցող Ընկերությանը սոցիալ-տնտեսական այս բարդ իրավիճակում չզրկել գործունեություն ծավալելու հնարավորությունից:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/87 ընթացակարգի շրջանակներում 29.04.2020թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1242-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) հայտ էր ներկայացրել «Առսարքտեխ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում արձանագրել է, որ «Առսարքտեխ» ՍՊԸ-ի հայտում առկա է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ:

Պատվիրատուն հայտնել է, որ ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.04.2020թ.-ին որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում «Առսարքտեխ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, և գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, որոշել է Ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է Ընկերության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/87 ընթացակարգի շրջանակներում 29.04.2020թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

## 4. <u>ՍՑ-ՆԳ-2020/87 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/87 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Առսարքտեխ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2020թ. թիվ 26/26-1/5856-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 16.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1242-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Առսարքտեխ» ՍՊԸ-ի 23.04.2020թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Նույն կետի 9-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում՝ հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը,

ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Առսարքտեխ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Ընկերության կողմից որպես հայտի ապահովում ներկայացվել է «Առսարքտեխ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից հաստատված Ընթացակարգի հրավերով սահմանված հավելված N 3-ը, այնինչ, համաձայն Ընթացակարգի հրավերի 7.1 կետի, մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով:

Ընդ որում՝ եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա անհրաժեշտ է սահմանված ժամկետում կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը ուղարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ Լ.Թազայանին, l.tazayan@mil.am էլեկտրոնային հասցեով, իսկ երաշխիքի բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնել մինչև 13.04.2020թ.-ը Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով, իսկ հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով 09.04.2020թ. ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ «Առսարքտեխ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, որի հիման վրա, Կարգի 42-րդ կետի համաձայն, մերժվել է վերջինիս հայտը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը 06.04.2020թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության հետ կապված՝ արդեն մեկ ամսից ավել է՝ Ընկերությունը աշխատում է հեռահար եղանակով՝ տանից, ինչի արդյունքում աշխատակիցների շփման ընթացքում տեղի է ունեցել թյուրըմբռնում, և ոչ դիտավորյալ

կերպով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախատեսված ապրանքի տասը միավորի փոխարեն գնային առաջարկում նշվել է ընդամենը մեկ միավորի գին, որի վկայությունն է նաև շուկայական գների ուսումնասիրությունը և Պատվիրատուի կողմից տվյալ գնման համար նախատեսված գումարը:

Ընկերությունը հայտնել է, որ ընդունում է մեղքի իր բաժինը և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին խնդրել է մեղմ գտնվել և մեկ տեխնիկական վրիպակի պատճառով աշխատող, պետությանը հարկ վճարող, բարի համբավ ունեցող Ընկերությանը սոցիալ-տնտեսական այս բարդ իրավիճակում չզրկել գործունեություն ծավալելու հնարավորությունից:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Առսարքտեխ» ՍՊԸ-ն 23.04.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության հետ կապված՝ արդեն մեկ ամսից ավել է՝ Ընկերությունը աշխատում է հեռահար եղանակով՝ տանից, ինչի արդյունքում աշխատակիցների շփման ընթացքում տեղի է ունեցել թյուրըմբռնում, և ոչ դիտավորյալ կերպով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախատեսված ապրանքի տասը միավորի փոխարեն գնային առաջարկում նշվել է ընդամենը մեկ միավորի գին:

Ընկերությունը հայտնել է, որ նշվածի վկայությունն է նաև շուկայական գների ուսումնասիրությունը և Պատվիրատուի կողմից տվյալ գնման համար նախատեսված գումարը:

Ընկերությունը հայտնել է, որ ընդունում է մեղքի իր բաժինը և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է մեղմ գտնվել և մեկ տեխնիկական վրիպակի պատճառով աշխատող, պետությանը հարկ վճարող, բարի համբավ ունեցող Ընկերությանը սոցիալ-տնտեսական այս բարդ իրավիճակում չզրկել գործունեություն ծավալելու հնարավորությունից:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Առսարքտեխ» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը փաստացի հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.04.2020թ. թիվ 26/26-1/5856-2020 գրությամբ «Առսարքտեխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Առսարքտեխ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ